

<p style="text-align: center;">Հաստատված է՝          ՀՀ փաստաբանների պալատի          հանրային պաշտպանի գրասենյակի          ղեկավարի 03.01.2023թ. որոշմամբ</p> <p style="text-align: center;">ՀՊԳ ղեկավար՝ Գևորգ Մկրտչյան</p> <p style="text-align: center;">_____</p>	<p style="text-align: center;">Հաստատված է՝          «Հայաստանի Հանրապետության          փաստաբանական ակադեմիա» հիմնադրամի          կառավարման խորհրդի 09.01.2023թ. թիվ 1/1-Լ          որոշմամբ</p> <p style="text-align: center;">Խորհրդի նախագահ՝ Սիմոն Բաբայան</p> <p style="text-align: center;">_____</p>
---	---



**ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՎՃԱՐ  
 ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ  
 ԳՈՐԾԸՆԹԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ  
 ՆԵՐԳՐԱՎՄԱՆ**

**Կ Ա Ր Գ**

ք. Երևան  
 2023թ.



## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հանրային պաշտպանի կողմից անվճար իրավաբանական օգնության տրամադրման գործընթացին «Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամի (**այսուհետ՝ ՀՀ փաստաբանական ակադեմիա**) ունկնդիրների (**այսուհետ՝ Ունկնդիրներ**) ներգրավման սույն կարգը (**այսուհետ՝ Կարգ**) սահմանում է փորձաշրջանի փուլում գտնվող ունկնդիրների միջոցով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի (**այսուհետ՝ Հանրային պաշտպանի գրասենյակ կամ ՀՊԳ**) շահառուներին անվճար օգնության տրամադրման ընթացակարգը:

2. Սույն կարգի իրագործման պատասխանատու ստորաբաժանումը ՀՀ փաստաբանական ակադեմիայի գիտագործնական դեպարտամենտն է՝ իրավաբանական կլինիկայի ծրագրի շրջանակում:

## II. ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

3. ՀՀ փաստաբանական ակադեմիայի կողմից շաբաթական առնվազն մեկ անգամ՝ ամբողջ օրվա ընթացքում տրամադրվում է անվճար իրավաբանական օգնություն Հանրային պաշտպանի գրասենյակի շահառուներին՝ գրավոր և բանավոր խորհրդատվության ձևով: Շաբաթվա օրը որոշվում է ՀՀ փաստաբանական ակադեմիայի գիտագործնական դեպարտամենտի ղեկավարի և Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի կողմից:

4. Շահառուին իրավաբանական օգնություն է տրամադրվում Հանրային պաշտպանի գրասենյակի նախաձեռնությամբ:

5. Գրավոր խորհրդատվության դեպքում կազմվում են իրավաբանական բնույթի փաստաթղթեր՝ ներառյալ հարցումներ և դատավարական փաստաթղթեր:

6. Սույն կարգով սահմանված իրավաբանական օգնությունը տրամադրվում է ՀՀ փաստաբանական ակադեմիայի ուսուցման փորձաշրջանի փուլում գտնվող ունկնդիրների կողմից՝ ՀՀ փաստաբանական ակադեմիայի կողմից նշանակված փաստաբանի հսկողությամբ:

7. Անվճար իրավաբանական օգնությունը տրամադրվում է քաղաքացիական, վարչական և քրեական գործերով Հանրային պաշտպանի գրասենյակի գտնվելու վայրում:



8. ՀՀ փաստաբանական ակադեմիան իրավասու է տեսաձայնագրել խորհրդատվության տարածքը՝ ունկնդիրների խորհրդատվության որակը վերահսկելու նպատակով:

9. Խորհրդատվության տարածքի տեխնիկական հարցերը կողմերը լուծում են համատեղ:

10. ՀՀ փաստաբանական ակադեմիան իրավունք ունի նույն օրվա ընթացքում անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու նաև շահառուի կարգավիճակ չունեցող այլ քաղաքացիներին:

### **III. ՀԱՇՎՈՒՄԸ**

11. Շահառուներին իրավաբանական օգնություն տրամադրելու դեպքերը հաշվառվում է ՀՀ փաստաբանական ակադեմիայի գիտագործնական դեպարտամենտի ղեկավարի կողմից:

12. ՀՀ փաստաբանական ակադեմիայի գիտագործնական դեպարտամենտի ղեկավարը յուրաքանչյուր ամիս, մինչև հաջորդ ամսվա 15-ը, Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարին է փոխանցում տեղեկություններ հաշվետու ամսվա ընթացքում հանրային պաշտպանի գրասենյակի շահառուներին տրամադրված անվճար իրավաբանական օգնության մասին՝ այդ թվում տրամադրված իրավաբանական օգնության տեսակը և ունկնդրի մասին տեղեկություններ:

### **IV. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹ**

13. Սույն կարգն ուժի մեջ է մտնում 2023թվականի հունվարի 9-ից: